Զ. ԱՂՈԹՔՆԵՐ

1. ԲԱՐԻ ԼՈՒՍՈՒ

Բարի լուսու քաղցրի՛կ Քրիստոս,
Խնամ էղի տերունական,
Աշխարի շեն շատ դատողին,
Խարիբներու տան ու տեղին՝
Խնամ էղի հափսարական,
Բարի լուսու քաղցրի՛կ Քրիստոս։

2. ԷԿԱՆ ՍԱՐՈՎ

Էկան սարով, ձորու ճամպով,
Էկան իրեք կանանչ կապով,
Մեկն է Հիսոս, մեկ Քրիստոս,
Մեկն անարատ ասվարածին։
Հրիշտակ դեմ դիպավ բարով.
—Յու՞ստ կէրթաս յառջեն ի բարով։
—Կէրթամ ի դուռըն հիվընդին,
Ջնջիլ բերեմ բոլոր պատին,
Իրեք բեռեռ կէր էն խաչին,
Մեկն է ի սիրտ չար սատանին,
Մեկն է բերան դել-դաղանին,
Մեկն է ժուռ դա մեջ գիշերին,
Ցիգա նստի վերև բարձին,
Ջուր դա գալոց Քրիստոսին։
Էրկնուց հրիշտա՛կ, դո՛ւ պահապան։

3. ԷՐՆԵ՛Կ, ԷՐՆԵ՛Կ

Էրնե՛կ, էրնե՛կ էն տարին՝
Յերուսաղեմ շինեցին,
Շինեցին թամբմեցին,
Անուն Հիսուս դրեցին.
Էղավ ժամտուն էն մըղիկ,
Սիվտակ՝ իմալ էղվընիկ,
Ոն իրեք հեղ ղէն հիշա՝
Յընկնա ի հուր՝ չը վառի,
Յընկնա ի սուր՝ չը վախնա,
Աչքն ի դժոխք չը տեսնա,
Դրախտին արժա՛ն էղնի։

4. ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆ ԱՍՏՎԱԾԱՐԱՆ

Լուսավորիչն աստվածաբան,
Ուր ձեռք առավ արդար խարզան,
Յելավ քոմեց չարք ու դիվան,
Տարավ թալեց ի մութ ղնդան.
Եբ օր փակեց ի մութ ղնդան՝
Կաղ դև մե կեր մըշ էդ դիվան,
Էկավ յընկավ վըր ուր ծնկան,
Խնդիրք էրեց, ըսեց.—Յա՛ման,
Ջիս մը փա՛կի ի մութ ղնդան՝
Եբ չը փակիս ի մութ ղնդան՝
Կէղնիմ վսնքին ես փոշեհան,
Փոշին հանիմ ինոր թունդրան,
Տանիմ թափիմ Փրեբաթման,
Ջուր Քրիստոս դա դատաստան։

5. ՃՐԱԳ, ՃՐԱԳ, ՃՐԱԳԼՈՒՍ

Ճրագ, ճրագ, ճրագլուս,
Ճշմարտաբան ամենուս։
Մեր Քրիստոս լուսուլուս՝
Հեծավ ուր կապուտ քուռակ,
Գնաց ի Յուռնի քաղաք,
Կոտրեց դուռնի պղընձին,
Եբեր էրաղն ի բարին,
Քունն անուշ պղտկին, մեծին։

6. ՄԵՌՆԻՄ ՔԸՂԻ, ՄԱՐԱԹՈՒ՛Կ

Մեռնիմ քըղի, Մարաթո՛ւկ
Հուս-ապավեն արդարոց,
Քու զորու պես պինդ պահե,
Խաղաղութեն մըշ մարդոց։

7. ՄԵՌՆԻՄ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐՉՈՒՆ

Մեռնիմ սուրբ Լուսավորչուն,
Սըբ Կարապետու խաչուն,
Ուսին-ուսին՝ սուրբ կուսին,
Օսկեճոկան Քրիստոսին։

9—724

8. ՄԵՐ ՏԵՐՆ ԷԿԱՎ

Մեր տերն էկավ, ամպով խաղաց,
Չորեքդիմու աշխար դողաց,
Էկավ Նստավ աթոռ փառաց,
Ձենն ի տվեց հրիշտակաց.
Էկավ Պողոս, էկավ Պետրոս,
Ոն իրեք հեղ զէնի հիշա՝
Ցընկնա ի հուր՝ չը վառի,
Ցընկնա ի սուր՝ չը վախնա,
Աչքն ի դժոխք չը պատի,
Դրախտին արժա՞ն էղնի։

9. ՉԱՐՆ Ի ՉԱՐՈՎ ՉՈՐԱՆԱ

Չարն ի չարով չորանա,
Բարին տիրով զորանա,
Հիսուս-Քրիստոս, Մայրամ կուս,
Ցըմնուն փրկեք փորձանքեն,
Ցըմնուց ջնաւ՝ իմ որդուս։

10. ՊԱՌԱՎԱՆՑ ԱՂՈԹՔ՝ ԼՈՒՍՆԱԿԻՆ

—Նո՛ր, նո՛ր, նորավո՞ր,
Կանանչ, կարմիր թագավոր,
Ծեր գացիր, տղա էկար,
Ցեզր ախշըրքեն ի՞նչ խաբրիկ բերիր։
—Ախշըրքին խեր ու խաղաղութեն,
Թագավորներուն բարիշութեն,
Մահին թանկութեն,
Հացին ջեժնութեն,
Իմ հոգուն՝ արքայութեն։

11. ՉԱՐ ԱՉԻՑ ԴԵՄ

Չար աչքն՝ ի չար փուշ,
Չար փուշն՝ ի կրակ,
Չար կրակն՝ ի ծով,
Ծովն յանատակ։
Սև օձն էկավ կլկլըշալեն,
Կթեցի ղկաթ՝ լցի քասեն,
Տարա ղաբկի մըջ չար աչքին,
Դառձա ըսի մըջ աղոթքին.
Չար աչքն՝ ի չար փուշ,
Չար փուշն՝ ի կրակ,
Չար կրակն՝ ի ծով,
Ծովն յանատակ։

12. [ՄՇԵՑԻ ԿՆՈՋ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՂՈԹՔԸ[1]]

Ոռշնյալի Աստված[2],
Ոռշնյալի բարի լուսու քաղցրիկ Քրիստոս.
Է՜յ, շաղաթաթախ Հայոց սուրբ աղոթրան.
Է՜յ չորեքկողման սրբեր,
Սերոբե՛ք, Քերոբե՛ք,
Ինն դաս հրիշտակներ,
Բարեխոս ջելնաք առ Աստված։
Յա՜ Տիրամայր սուրբ Աստվածածին,
Յա՜ Մշու սուլթան սուրբ Կարապետ,
Ատենահաս բոզ ձիավոր[3] սուրբ Սարգիս,
Իմ ձեռ ձեր փեշն իմ թալի[4],
Բարեխոս էղնիք սրար աշխըրին,
Իմ մեղավոր հոգուն։
Մեղա՜ քեզ, Աստված,
Մեղա՜ Աստծու Աստված,
Երկրի ու երկրի[5] ստեղծող Աստված,
Մեղա՜ քեզ, Տե՛ր,
Դու ղքու ստեղծած հոգին չը կորցուս,
Իմ մեղք շատ է,
Քընց քարն ի քռեն[6],
Քընց ավազն ի ծովեն,
Քընց թուփն ի ծառեն։
Աստվա՛ծ, դու իմ մեղք չաշըիս[7],
Իմ խեղճն[8] աչքիս.
Տե՛ր, դու օղորմանաս հաֆթ ու դու միլաթին[9].
Ամենեցու [ն] սաղսղեն,
Իմ տան ընտավորին,
Իմ ղարիբ-զուբրաթին[10],
Իմ մեկուճար պրակին[11],
Ցետև դահուն[12] իմ մեղավոր, չանարժան
հոգուն.
Տե՛ր, դու չհանիս ահնի սրտեն[11],
Ամոթն ի ջիրեսեն,
Դու զչար խափանիս,
Ջբարին բերիս,
Չար էրազն ի բարին դարձուս,
Ամեն փորձանքից հեռու պահիս.
Քու աջն հովանի էղնի,
Տե՛ր, մեղա՜ քեզ։
Է՜յ կապո՛ւտ վրան, քի՛ իմ ապավինի[14]...

---

[1] Վերնագիրը մերն է։ [2] Տողատված է արձակից։ [3] Ժամանակին հասնող սպիտակ ձիավոր։ [4] Ձեռքս երկարացրել եմ փեշիդ։ [5] Երկնքի։ [6] Քան բլրի քարը։ [7] Նկատի չունենաս։ [8] Խեղճությունս։ [9] Յոթանասուն երկու ազգերին (քրդերեն)։ [10] Պանդուխտին։ [11] Պուրակին՝ այսինքն միամոր որդուն։ [12] Ամենից վերջ, վերջին պահին։ [13] Երկյուղածությամբ պահիս առ քեզ։ [14] Կապույտ երկինք, քե՛զ եմ ապավինել (Ս. Կ.)։